ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ 150 ԱՄՅԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

04.10.2016 16:35

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը և Փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը Մոսկվայում մասնակցել են Ռուսաստանի Դաշնության փաստաբանության ինստիտուտի ձևավորման 150 ամյակին նվիրված միջոցառումներին:

Հոբելյանական միջոցառումների շրջանակում սեպտեմբերի 30-ին 9 երկրի՝ Ռուսաստան, Բելառուս, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Լատվիա, Լիտվա, Ուզբեկստան, Հայաստան փաստաբանական համայնքների ներկայացուցիչները պայմանավորվել են համագործակցության հնարավոր ուղղությունների շուրջ, ինչպես նաև քննարկել են քրեական գործերով դատավարություններին մասնակցող փաստաբանների գործունեության ստանդարտացման հնարավորությունը:

Կլոր սեղան-քննարկմանը Ռուսաստանի Դաշնության փաստաբանների պալատի նախագահ Յուրի Պիլիպենկոն կարևորել է արտերկրյա գործընկերների փորձը՝ նշելով, որ հատկապես հետխորհրդային երկրների փաստաբանների համար առավել առաջնահերթ է խորացնել ոլորտային համագործակցությունը, քանի որ միևնույն անցյալով պայմանավորված հաճախ են բախվում նույնաբնույթ խնդիրների: Այս իմաստով միասնական լուծումներ գտնելն առավել արդյունավետ և փոխշահավետ գործընթաց է համարել:

Նա տեղեկացրել է ներկաներին, որ Ռուսաստանի փաստաբանական համայնքի համար արդիական խնդիր է քրեական դատավարությանը փաստաբանի մասնակցության կանոնակարգումը՝ նշելով, որ Դաշնությունում գործող փաստաբանների 70 տոկոսը քրեական գործերով են մասնագիտացած: Միաժամանակ վերջինս տեղեկացրել է, որ ռուսաստանյան որոշ փաստաբաններ առաջարկել են նշված կանոնակարգումն իրականացնել քրեական գործերով հանդես եկող փաստաբանի գործունեությունը ստանդարտացնելու միջոցով և մասնակիցների դատին է հանձնվել ստանդարտի նախագիծը: Ըստ առաջարկվող ստանդարտի, քրեական գործով փաստաբանը պարտավոր է իրականացնել որոշակի ծավալով գործողություններ:

Մասնագիտական քննարկումների արդյունքում հնչել են տարբեր տեսակետներ:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ներկայացուցիչները բացասական դիրքորոշում են հայտնել փաստաբանական գործունեության ստանդարտացման վերաբերյալ՝ նշելով, որ յուրաքանչյուր քրեական գործ յուրօրինակ է և ստանդարտացման դեպքում կարող է սահմանափակվել պաշտպանյալի իրավունքների պաշտպանությանն ուղղված փաստաբանի ազատ գործելու հնարավորությունը. հետևաբար ստանդարտներով առաջնորդվելը ռիսկային և միևնույն ժամանակ բավական զգայուն հարց է, կարող է չնախատեսված հետևանքներ ունենալ:

Ղազախստանի փաստաբանների պալատի պատվիրակությունը նույնպես բացասական կարծիք է ներկայացրել ստանդարտացման վերաբերյալ:

Քննարկումների շրջանակներում Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի պատվիրակությունը ներկայացրել է հանրային պաշտպանության ոլորտում ՀՀ փաստաբանների պալատի փորձը, հանրային պաշտպանի գրասենյակի գործառույթների առանձնահատկությունները և արդյունավետությունը:

Մյուս երկրների փաստաբանական համայնքների ներկայացուցիչները ըստ էության դժգոհել են անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու իրենց երկրների մոդելներից՝ հետաքրքրությունը ցուցաբերելով հանրային պաշտպանի գրասենյակի ինստիտուտին:

Հանդիպման ավարտին մասնակիցները եկել են նախնական համաձայնության ԱՊՀ և Բալթյան երկրների համատեղ երկրորդ հանդիպումն անցկացնել 2017-ի գարնանը՝ Վրաստանում: Երկրորդ միջազգային մասնագիտական հավաքի օրակարգում են լինելու

փաստաբանի գործունեության, հաճախորդի պաշտպանության միջազգային մոտեցումների և ոլորտին առնչվող այլ թեմաներ:



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })